յարմարացրել էր ճապոնականին, սկսելով իր արդէն իսկական ճապոնուհի կնոջից մինչեւ իր երկար ու յարմար ճապոնական խալաթը:

Նախաճաշից յետոյ մեր ֆրանսիացի ճապոնացին սիրալիր կերպով մեզ ճամփայ դրեց, նախապէս տալով մի հիւրանոցի հասցէ: Եւ մենք մի քառորդ ժամ յետոյ ընկել էինք նորից մեր ճակատագրական առաջնակարգ հիւրանոցը:

Տօկիօ ահագին քաղաք է. մինչեւ հիմա իմ տեսածներից ամենամեծը: Իսկոյն մարդու ուշադրութիւնն են գրաւում ամեն կողմ փռւած ընդարձակ պուրակները պարկերը: Դրանցից ամենագրաւիչը Ուէնօ կոչւած պարկն է, ուր աճում են հրաշալի կերասենիներ: Ապրիլ ամսին այդ ծառերը ծածկւում են իրանց քնքոյշ ու սպիտակ ծաղիկներովը, ու ամբողջ քաղաքը գալիս է հիանալու: Երեխաներին յատուկ մի օր արձակուրդ են տալիս ու տօն են սարքում, որ դան բնութեան այդ գեղեցկութիւնը վայելեն:

Իսկ բանաստեղծները հնչիւն երգեր են հիմնում այդ ձիւնափայլ անարատ ծաղիկը գովաբանելու, որ «մի անարատ ամպ է, ջինջ երկնքից իջած ու փաթաթւած ծառի սաղարթին ու կախ ընկած նրա ամեն մի ճիւղից ու ոստից»:

Աւելացնեմ միայն, որ այդպէս սիրւած ու երգւած ծառի պտուղը ճապոնացին չի ուտում:

Իսկ Շիբա-պարկը հռչակւած է իր տաճարներով, ուր թաղւած են սիօգունները, Ճապոնի նախկին աշխարհական տէրերը: Այդ տաճարները իրաւամբ համարւում են ճապոնական գեղարւեստի հրաշալիքը:

Նախ պէտք է անցնես մի քանի բաց, որոնք միանում են իրար հետ գեղեցիկ դարբասներով: Վիշապները գալարւում